ԾՐԱԳԻՐ

ԴԱՐՎԻՆԻԶՄԻ

575.4
Ծ-89

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԱՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1937

20 JUL 2000

ՀՍԽՀ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 42 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 42

575.4
Ծ-89

ԾՐԱԳԻՐ

ԴԱՐՎԻՆԻԶՄԻ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՑԵՐԵՎԱՆ 1937

14.05.2013

79388

ՊԱՏ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍԽՀ-ՍՍՀ

1049
38

Խ. Ս. Հ. Մ. Ժ. Կ. Խ.
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ԽՍՀՄ ԺԿԽ. կից բարձրագույն դպրոցների համամիութենական կոմիտեի նախագահ՝ Ի. Ի. ՄԵԺԼԱՈՒԿ

21-ին սեպտեմբերի 1937 թ.

ՊՐՈՑԵԿՏ

«ԴԱՐՎԻՆԻԶՄ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

I. ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Ծրագիրը հաշված է 70—90 դասախոսական ժամերի ծավալով և յենթադրվում է, որ ուկնդիրները համալսարաններում և այլ բարձրագույն հիմնարկներում ուսումնասիրվող հիմնական բիոլոգիական գիտությունների ընագավառից ունեն համապատասխան պատրաստականություն։ Յենթադրվում է, որ ունկնդիրները թեկուզ ընդհանուր, նախնական պատրաստականություն ունեն դիալեկտիկական մատերիալիզմի դասընթացից։

Ծրագիրն իր խնդիրն է դրել—գյուղատնտեսական մասնագետներին և բիոլոգ մասնագետներին զինել օրգանական աշխարհի զարգացման միակ հիշա թեորիա—դարվինիզմով, նաև քննադատական մոտեցումով դեպի՝ դարվինիզմից հրաժարվող արդի բուրժուական գենետիկների հակադարվինիստական շեղումները։

ԾՐԱԳՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. դասընթացի խնդիրները և նպատակները։

I. ԵՎՈԼՈՒՑԻՈՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԹԵՄԱ 1. Եվոլուցիոն գաղափարները հին և միջին դարերում։
ԹԵՄԱ 2. Նոր ժամանակաշրջանի եվոլուցիոն գաղափարները։
ԹԵՄԱ 3. Ժան Բապտիստ Լամարկ։

II· ԴԱՐՎԻՆԻԶՄ

ՉԱՐԼԶ ԴԱՐՎԻՆ ՅԵՎ ՆՐԱ ՈՒՍՄՈՒՆՔԸ

ԹԵՄԱ 1. Չ. Դարվինի կյանքն ու աշխատանքը։

ԹԵՄԱ 2. Դարվինիզմի բնապատմական և սոցիալական նախադրյալները։

ԹԵՄԱ 3. Չ. Դարվինի էվոլուցիոն թեորիան։

1. Ուսմունք փոփոխականության և ժառանգականության մասին։

ԹԵՄԱ 4. Չ. Դարվինի էվոլուցիոն թեորիան։

2. Գոյության կռիվ և բնական ընտրություն։

ԹԵՄԱ 5. Տեսակի պրոբլեմը դարվինիզմի լուսաբանությամբ։

ԹԵՄԱ 6. Որգանական նպատակահարմարության պրոբլեմը դարվինիզմի լուսաբանությամբ։

ԹԵՄԱ 7. Դարվինիզմի գնահատականը մարքսիզմ-լենինիզմի դիրքերից։

ԹԵՄԱ 8. Դարվինիզմի ազդեցությունը բիոլոգիական գիտությունների զարգացման վրա։

ԴԱՐՎԻՆԻԶՄԻ ԱՐԴԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՄԱ 9. Փոփոխականության ուսմունքի արդի դրությունը։

ԹԵՄԱ 10. Ժառանգականության ուսմունքի արդի դրությունը։

ԹԵՄԱ 11. Արհեստական ընտրության և սելեկցիայի թեորիայի արդի դրությունը։

ԹԵՄԱ 12. Գոյության կռվի և բնական ընտրության թեորիայի արդի դրությունը։

ԹԵՄԱ 13. Եվոլուցիայի ընթացքը և էվոլուցիոն պրոցեսի դեկավարման պրոբլեմը։

ԹԵՄԱ 14. Կ. Ա. Տիմիրյազեվ, Ի. Վ. Միչուրին, Տ. Գ. Լիսենկո—խորհրդային դարվինիստներ։

III. ՊԱՅՔԱՐ ՀԱԿԱԴԱՐՎԻՆԻԶՄԻ ԴԵՄ

ԹԵՄԱ 1. Սոցիալական դարվինիզմ։

ԹԵՄԱ 2. Մեխանոլամարկիզմ։

ԹԵՄԱ 3. Ավտոգենեզ։

ԹԵՄԱ 4. Բուրժուական գենետիկա։

ԾՐԱԳԻՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԵՎՈԼՈՒՑԻՈՆ ՈՒՍՄՈՒՆՔ ՅԵՎ ԴԱՐՎԻՆԻԶՄ

Եվոլուցիոն պրոցեսի էությունը, վորպես ժառանգաբար պատմական անցյալի ձևերի հետ կապակցված վորակապես նոր ձևերի լինելության և զարգացման պրոցես։

Եվոլուցիոն ուսմունքի բովանդակությունը և նրա հիմնական պրոբլեմները։

1. Եվոլուցիոն գաղափարի պատմությունը կապակցված մարդկային հասարակության զարգացման հետ։

2. Եվոլուցիոն ուսմունքի ապացույցներ և եվոլուցիոն պրոցեսի հետազոտության մեթոդները։

3. Եվոլուցիոն պրոցեսի ուղղությունների պրոբլեմը։

4. Եվոլուցիոն պրոցեսի շարժիչ ուժերի պրոբլեմը։

5. Եվոլուցիոն վորպես հարմարվողական պրոցես։

6. Եվոլուցիոն ուսմունքի վերաբերմունքը դեպի անտրոպոգենեզի պրոբլեմը։

Եվոլուցիոն ուսմունքը և դիալեկտիկական մատերիալիզմը։

Դարվինի ուսմունքի գնահատումը Մարքսի, Ենգելսի, Լենինի կողմից։ Եվոլուցիոն ուսմունքի նշանակությունը պրակտիկայում, վորպես եվոլուցիոն ուսմունքն իբրև գիտություն բնորոշող պայման։

Ընկ. Ստալինը գիտության և պրակտիկայի մասին։ Դարվինիզմի համառոտ բնութագրումը, վորպես միակ եվոլուցիոն ուսմունք, վոր հիմնված է պրակտիկայի

վրա և իր հետագա զարգացումն ել ստանում է գյուղատնտեսության սոցիալիստական պրակտիկայում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Դասախոսությունն ունի դասընթացի նպատակները և խնդիրները բնորոշող գրույթային բնույթ։

ՀԱՏՎԱԾ 1՝ ԵՎՈԼՈՒՑԻՈՆԻՍՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԹԵՄԱ 1. Եվոլուցիոնիստական գաղափարները պատմության հին յեվ միջին շրջաններում։

Եվոլուցիոն ուսմունքի, վորպես վորակապես նոր ձևերի լինելության և զարգացման օրենքների ուսմունքի՝ զարգացման գաղափարները հին Հունաստանի փիլիսոփաների աշխատություններում։ Հին Հունաստանի սոցիալական պայմանների բնութագրումը և հունական փիլիսոփայության հիմնական դպրոցները։ Իդեալիստական դպրոցներ։

Արիստոտելի ուսմունքը։ Կառուցվածքի միասնության և ձևերի իերարքիայի (դրադացիայի) գաղափարն Արիստոտելի մոտ և այդ գաղափարի բնութագրումն, վորպես յեղածի ծավալման և վոչ թե վորակապես նոր ձևերի զարգացման գաղափար։ Արիստոտելի ուսմունքը ենտելեխիայի մասին։ Կյանքի իդեալիստական կոնցեպցիայի ընդհանուր բնութագրումը Արիստոտելի և հնագարյան այլ փիլիսոփաների ուսմունքում։ Մեխանիստական դպրոցներ։ (Դեմոկրիտ, Լուկրեցիոս և ուրշ.) և նրանց տարբերությունները իդեալիստական դպրոցներից։ Իսկական պատմականության բացակայությունը հունական փիլիսոփաների իդեալիստական և մեխանիստական դպրոցներում։ Հունական փիլիսոփայության նշանակության գնահատումը Մարքսի և Ենգելսի աշխատություններում։

Ընդհանուր բնութագիր Բիոլոգիական գիտությունների զրության միջնադարի պայմաններում։ Կրոնի և ֆեոդալական հասարակության կրոնա-ազնվականական իդեոլոգիայի ազդեցությունն եվոլուցիոնիստական գաղափարների զարգացման վրա։

ԹԵՄԱ 2. Նոր ժամանակաշրջանի եվոլուցիոնիստական գաղափարները։

ա) Բիոլոգիական գիտությունների զրությունը XV, XVI և XVII դարերում։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը, վորպես պայման, վորը նպաստեց յերկրի կենդանական և բուսական աշխարհների բազմաձևության մասին գիտելիքների կուտակման։ Առաջին ամփոփումները յերկրի կենդանական և բուսական աշխարհի մասին։ Գեսների, Ալդրովանդիի և ուրշ. ամփոփումների ընդհանուր բնութագրումը։ Արիստոտելի և Թեոլոգիայի ազդեցությունը սիստեմատիկայի զարգացման վրա։ Առաջին պատկերացումները տեսակի մասին XVI դարի բուսաբանների (Ֆուքս, Սալվիանի, Բրունֆելս, և ուրշ.) նկարագրական աշխատանքներում։ Անատոմիայի և սիստեմատիկայի զարգացումը XVI և XVII դդ.։ Բույսերի արհեստական սիստեմ (Ա. Ցեզալպինո, Ժոզեֆ Տուրնեֆոր, Ջոն Ռեյ և ուրշ.)։ Հասկացողություն տեսակի մասին ըստ Ջոն Ռեյի։ Վեզալիի, Ֆաբրիցիի, Հարվեյի, Լեվենհուկի, Մալպիգի, Սպալանցանիի և ուր. աշխատանքների նշանակությունը կենդանի ձևերի ճանաչման համար։

բ) Կարլ Լիննե և նրա բնության սիստեմը։ Արարչագործության թեորիայի գրությունը XVIII դ.։ Տեսակի, վորպես սիստեմի անփոփոխ միավորի մետաֆիզիկ հասկացողությունը։ Լիննեն վորպես կրոնա-ազնվականական աշխարհայացքի և տեսակների կայունության մետաֆիզիկ ուսմունքի ներկայացուցիչ։ Այդ հայացքի ազդեցությունը Լիննեյի վրա։ Ճեղքվածքները (бреши) արարչագործության թեորիայի կողմնակիցների մետաֆիզիկական պատկերացումներում։ Տեսակների փոփոխականության պրոբլեմը Կարլ Լիննեյի և նրա աշակերտների աշխատանքներում։ Պատկերացումներ տեսակների սահմանափակ փոփոխականության մասին, վոր կախված է տեղական պայմանների ազդեցությունից կամ տեսակների խաչաձևումից։ Ենգելսը Կ. Լիննեյի «զիջումների» մասին ձևերի փոփոխականության ուսմունքին։ Ֆ. Ենգելսը զարգացման գաղափարի տարածման մասին բնագիտության մեջ։

գ) XVIII դ. եվոլուցիոնիստական հայացքները։ Բյուֆոն։ Յերկրի առաջացման ու զարգացման և կենդանի ձևերի առաջաց-

ման վերաբերյալ նրա հայացքների բնութագրումը։ Բյուֆոյի փորձերը կենդանական աշխարհի կազմի փոփոխությունները դիտելու կլիմայի և այլ ֆիզիկական գործոնների փոփոխությունների կապակցությամբ։ Բյուֆոյի պատկերացումները կենդանի ձևերի սահմանափակ փոփոխությունների մասին։ Բյուֆոյի վերաբերմունքը Լիննեյի հայացքներին։ Բյուֆոյի վերաբերմունքը սիստեմատիկային։ Բյուֆոյի պատկերացումները ձևերի սիստեմատիկ խմբերի վոչ ռեալ լինելու մասին։ Ըստ էության վոչ ճիշտ այդ պատկերացումների դրական նշանակությունն արարչագործության թեորիայի դեմ յեղած պայքարում։ Բյուֆոյի ընդհարումը տիրապետող կրոնա-աղնվականական աշխարհայացքի հետ, վորպես զարգացման գաղափարի թեր ու դեմ պայքարի սրման ցուցանիշ։

Բյուֆոյի արտահայտությունների հակասական լինելը։

զ) Պրեֆորմիստական գաղափարները և նրանց ազդեցությունն եվոլուցիոնիստական հայացքների զարգացման վրա 18-րդ դ.։ Ձևերի իերարխիայի գաղափարները Լայբնիցի փիլիսոփայության մեջ և նրա կապն Արիստոտելի փիլիսոփայության հետ։ Լայբնիցի «Անընդհատության որենքը»։ Բնության մեջ իերարխիայի և կարգի մետաֆիզիկ գաղափարի զարգացումը։ Կենդանի եյակների սանդուղի գաղափարը, ձևերի ծավալման (և վոչ թե զարգացման) գաղափարը Ռոբինեյի, Բոննեյի աշխատանքներում։ Եյակների սանդուղի ընդհանուր բնութագիրը և յեղածի բացման վերաբերյալ նրա արտահայտած եվոլուցիոնիստական գաղափարների տարբերությունը բնության նկատմամբ իսկական եվոլուցիոն հայացքից։ Սանդուղի աստիճանները, վորպես ներքին, պատմականորեն չկազմված ձևեր։

յե) Բնափիլիսոփայություն։ Նրա ընդհանուր բնութագիրը։ Բնափիլիսոփաների (Գյոթե, Ոկեն, Տրեվիրանուս և ուր.) եվոլուցիոնիստական գաղափարները և նրանց նշանակությունը, վորպես վավերագրեր, վորոնք ցույց են տալիս զարգացման գաղափարների ազդեցության աճումը 18-րդ և 19-րդ դ. սկզբում դասակարգի սոցիալական հարաբերությունների կապակցությամբ։

Երազմ Դարվին և նրա բնափիլիսոփայական գաղափարների հաժառոտ բնութագրումը։

զ) Նկարագրած եվոլուցիոնիստական ուսմունքների ընդհանուր բնութագրումը։ Ամբողջական, հետևողական եվոլուցիոն ուսմունքի նշանների և իսկական պատմականության ելեմենտների բացակայությունը նրանց մեջ։ Եկտոդերմեզի և պրեֆորմիզմի գաղափարների, իդեալիզմի և մեխանիցիզմի միջև միևնույն տեղում մնալը։ Նկարագրած եվոլուցիոնիստական ուսմունքների հակասական լինելը, վորպես արտայոլում գիտական տվյալների դրության և մեռնող կրոնա-աղնվականական իդեոլոգիայի ու բուրժուազիայի շահերի ու աշխարհայացքի միջև սրված հակասությունների։

Թեմա 3. Ժան Բապտիստ Լամարկ

Լամարկը—առաջին եվոլուցիոնիստ։ Լամարկի հաժառոտ կենսագրականը։ Նրա ժամանակվա դարաշրջանը։ Լամարկի աշխատանքները սիստեմատիկայի բնագավառում։ Լամարկի առաջին պատկերացումներն եվոլուցիայի մասին։ Նրա եվոլուցիոն գաղափարների ծավալված նկարագրությունը «Կենդանաբանության փիլիսոփայություն» գրքում։ Լամարկի եվոլուցիոն գաղափարների նկարագրությունը։ Տեսակների փոփոխության պրոբլեմը, վորպես տեսակների սահուն փոխակերպման ուղիով վորակապես նոր ձևերի առաջացման պրոցես։ Լամարկի վերաբերմունքը մահացման պրոբլեմին։ Լամարկի վերաբերմունքը սիստեմատիկական խմբերի ռեալականության պրոբլեմին, մասնավորապես տեսակի ռեալականության պրոբլեմին։ Փոփոխականության սկզբունքը և տեսակի վոչ ռեալ լինելը վորպես անփոփոխականության սկզբունքի և տեսակի բացարձակ ռեալականության «անտիթեզ»։ Ըստ էության Լամարկի սխալ, այդ «անտիթեզի» պրոգրեսիվ դրական նշանակությունը տեսակների կայունության թեորիայի դեմ մղված պայքարում։

Եվոլուցիայի շարժիչ ուժերն ըստ Լամարկի ուսմունքի։ սանդուղի աստիճանները և Լամարկի զրադացիայի գաղափարը։ Նրա սկզբունքային տարբերությունները և կատարյալ անկախությունը Բոննեյի և Ռոբինեյի աշխատանքներում արծարծված աստիճանների գաղափարից։ Ըստ Լամարկի պատկերացումների զրադացիայի պրոցեսը վորպես, որգանիզմների դեպի կա-

տարբերագործումը ձգտելու արդյունք։ Դրադացիայի պրոցեսը վորպես խոշոր տակսոնոմեարիկ խմբերի եվոլուցիայի հիմք։ Հարմարանքների բազմաձևության պրոբլեմը Լամարկի ուսմունքում։ Հարմարվողականությունը վորպես աստիճանական զարգացման պրոցեսին ուղեկցող մասնավոր պրոցես։ Լամարկի հայացքը բարձրակարգ կենդանիների և ստորին կենդանիների ու բույսերի վորակային տարբերությունների մասին, վորպես բույսերի և կենդանիների հարմարման պրոցեսների տարբերությունների մասին ունեցած նրա պատկերացումների հիմք։ Հարմարման պրոցեսը բարձրակարգ կենդանիների մոտ ըստ Լամարկի։ Միջավայրի նշանակությունը։ Միջավայրի փոփոխությունները և կարիքների փոփոխությունները։ Վարժեցում և վոչ վարժեցում։ Կառուցվածքի փոփոխությունը և Լամարկի առաջին որենքը։ Լամարկի յերկրորդ որենքը (ժառանգականության որենքը)։ Հարմարման պրոցեսը վորպես միջավայրի գործոնների ազդեցության ուղղակի արդյունք ստորին կենդանիների և բույսերի մոտ։

Լամարկի թեորիայի քննադատությունը դարվինիզմի և դիալեկտիկական մատերիալիզմի դիրքերից։ Լամարկի սխալ պատկերացումները տեսակի վորպես վոչ ռեալ կատեգորիայի մասին և եվոլուցիոն պրոցեսի, վորպես ձևերի փոխակերպման սահուն (այլ վոչ ընդհատ) պրոցեսի մասին։ Այստեղից բղխող ձևերի մահացման պրոցեսի սխալ բացատրումը Լամարկի կողմից։ Եվոլուցիայի պրոցեսի և հարմարման պրոցեսի հարաբերությունների սխալ պատկերացումները, վորոնք բղխում են հարմարման պրոցեսի սխալ հասկացողությունից։ Այդ պրոցեսի իդեալիստական մեկնաբանությունը Լամարկի թեորիայում։ Լամարկի առերևույթ մատերիալիզմը և բույսերի հարմարման պրոցեսի նրա մեկնաբանությունը։ Հիմնական ծառայությունը.—եվոլուցիոն ուսմունքի պրոբլեմատիկայի զրումն իր ամբողջ լայնությամբ (տեսակի պրոբլեմը, փոփոխականության և ժառանգականության ուսմունքը, եվոլուցիայի ուղղությունների և շարժիչ ուժերի պրոբլեմը)։ Լամարկի դարաշրջանի սոցիալական հարաբերությունները և նրա ուսմունքի անհիմն լինելը վորպես պատճառ նրա անհաջողության։

Եվոլուցիայի հիմնական պրոբլեմների անլուծելիությունը Լամարկի ուսմունքի հիման վրա։

Ադապտացիայի պրոբլեմը և եվոլուցիայի հարմարվողական բնույթը վորպես գործոն, վոր բաց է անում բնական ընտրության թեորիայի վրա չհենվող ամեն մի եվոլուցիոն թեորիայի սնանկությունը։

ՀԱՏՎԱԾ II. ԴԱՐՎԻՆԻԶՄ

Չ. ԴԱՐՎԻՆ ՑԵՎ. ՆՐԱ. ՈՒՍՄՈՒՆՔԸ

ԹԵՄԱ. 1. Չ. Դարվինի կյանքն ու աշխատանքը

Չ. Դարվինի կենսագրությունը։ Նրա կյանքի հիմնական փաստերը։ Դպրոցական տարիները և համալսարանական կրթությունը։ Դարվինի բնապատմական կրթությունը։ Ճանապարհորդություն «Բիգլ» նավի վրա (1831—36)։ Այդ ճանապարհորդության նկարագրությունը։ Լյելլի «Գեոլոգիայի հիմունքները» գրքի ուսումնասիրությունը և նրա ազդեցությունը Դարվինի վրա։ Ճանապարհորդության արդյունքները։ Ճանապարհորդության նշանակությունը Դարվինի, վորպես բնագետի և եվոլուցիոնիստի ձևակերպման մեջ։

Վերադարձ Անգլիա և աշխատանքը եվոլուցիոն թեորիայի վրա։ 1858 թ. նրա թեորիայի համառոտ բացատրության հրապարակումը «Լիննեյան ընկ. ժուռնալ»-ում միաժամանակ Ա. Ուոլլեսի հոդվածի հետ։ «Տեսակների ծագում»-ի հրապարակումը 1859 թ.։ Գրքի հաջողությունները։ Յերկրորդ հրատարակության լույս ընծայելը 1860 թ., յերրորդինը—1861 թ.։

Համառոտ տվյալներ «Տեսակների ծագում»-ի հետագա հրատարակությունների մասին և Չ. Դարվինի հետագա աշխատանքների համառոտ տեսություն։

Կյանքը Դաուն-ում։ Չ. Դարվինը վորպես գիտնական և մարդ։ Դարվինի մահը։ Դարվինի համաշխարհային փառքը։

ԹԵՄԱ. 2-րդ. Դարվինիզմի բնապատմական յեվ սոցիալական նախադրյալները։

ա) Սիստեմատիկայի զարգացումը և դարվինյան եվոլուցիոն թեորիայի ոգուն վկայող փաստերի կուտակումը սիստեմատիկայի բնագավա-

ռ ի ց.—Տեսակների փոփոխությունը սիստեմատիկայի տվյալների համաձայն։ Արհեստական և բնական սիստեմատիկական խմբերի վերաբերյալ պատկերացումների զարգացումը և բնության մեջ բնական խմբերի ունեցած գոյության նշանակությունն էվոլուցիոն ուսմունքի (դարվինիզմի) համար։ Տիպերի և համընդհանուր սիստեմատիկական կատեգորիաների ուսմունքի զարգացումը և նրա բացատրությունը Դարվինիզմի հողի վրա։ Սիստեմատիկների և մորֆոլոգների պայքարը XIX դ. ձևերի բնական խմբերի առնչություններն սանդուղքի ձևով պատկերացնելու դեմ, կապված «բարձրակարգ» և «ստորին» խմբերի մասին հասկացողությունների պարզված հարաբերականության հետ։ Ծննդաբանական ծառերի մասին պատկերացումների զարգացումը և այդ հարցի առնչությունը (отношение) դիվերգենտ էվոլուցիայի վերաբերյալ դարվինյան պատկերացումների հետ։ Դարվինը «ծննդաբանական ծառերի» մասին։

բ) Մ ո ր ֆ ո լ ո գ ա ի ա յ ի զ ա ր գ ա ց ո ւ մ ը XIX դ. ա ռ ա ջ ի ն կ է ս ի ն.—Ժոֆրուա Սենտ-Իլեր և նրա դերը մորֆոլոգիայի զարգացման մեջ։ Ժ. Սենտ-Իլերի էվոլուցիոնիստական ուսմունքի բնութագրումը։ Ժ. Սենտ-Իլերի վերացական պատկերացումները միասնական կառուցվածքի պլանի մասին. Սենտ-Իլերի հասկացողությունն անալոգ օրգանների մասին և այդ հասկացողության նշանակությունն էվոլուցիոն ուսմունքի համար։ Ձևերի փոփոխության պատճառներն ըստ Ժ. Սենտ-Իլերի։ Օրգանական աշխարհի ամբողջական պատմական հասկացողության և ամբողջ էվոլուցիոն գաղափարի բացակայությունը Ժ. Սենտ-Իլերի մոտ։ Ժ. Սենտ-Իլերը վորպես համեմատական անատոմիայի հիմնադիր։

Ժորժ Կյուվիե։ Կյուվիեյի համեմատական-անատոմիական աշխատանքները։ Օրգանիզմի՝ վորպես միասնության, նրա հասկացողությունը։ Օրգանիզմի մասերի հարաբերակցության օրենքը։ Օրգանների աղերսակցություն (կորրելյացիա)։ Փոխադարձ ֆունկցիոնալ ադապտացիաներ։ Օրգանների «ուբորդինացիայի» սկզբունքը։ Կառուցվածքի չորս պլան ըստ Կյուվիեյի։ Կյուվիեն վորպես արարչագործության թեորիայի կողմնակից։

Ժ. Սենտ-Իլերի և Կյուվիեյի միջև յեղած վեճը կառուցվածքի միասնական պլանի և կառուցվածքի չորս պլանի առթիվ։ Վեճի բնույթն ու նշանակությունը և նրա առնչությունն էվոլուցիոն

գաղափարի հետ։ Կյուվիեյի հաջողությունների պատճառները բանավեճում։ Ժ. Սենտ-Իլերի աշխատանքների և մանավանդ Կյուվիեյի աշխատանքների օբյեկտիվ նշանակությունը, վորպես էվոլուցիոն ուսմունքի ոգին վկայող նյութ։ Անատոմիայի զարգացման ընդհանուր ակնարկ և համեմատական անատոմիայի զարգացման սաղմերը XIX դ. առաջին կեսին (Բլյումենբախ, Ֆիշեր, Ֆոն Վալդհեյմ, Լյուդվիգ Բոյանուս, Ֆրիդրիխ Մեկել, Կ. Ռուգոլֆ և Ուրիշներ). Անալոգ (Հոմոլոգ) նմանությունների վերաբերյալ ուսմունքի զարգացումը և նրա նշանակությունը էվոլուցիոն ուսմունքի հիմնավորման համար։

գ) Ս ա ղ մ ա բ ա ն ո ւ թ յ ա ն զ ա ր գ ա ց ո ւ մ ը XIX դ. ա ռ ա ջ ի ն կ է ս ի ն.—Վաղնաշարավորների սաղմաբանության զարգացումը։ Կարլ Բերի, Պանդերի և ուրշ., հետազոտողների աշխատանքները։ Բերի օրենքը և նրա օբյեկտիվ նշանակությունն էվոլուցիոն ուսմունքի հիմնավորման մեջ։

դ) Պ ա լ ե ո ն տ ո լ ո գ ի ա յ ի և կ ե ն ս ա շ խ ա ր հ ագ ր ո ւ թ յ ա ն զ ա ր գ ա ց ո ւ մ ը XIX դ. ա ռ ա ջ ի ն կ է ս ի ն.—Կյուվիեյի պալեոնտոլոգիական աշխատանքները։ Կյուվիեյի հայացքներն իր հայտնաբերած պալեոնտոլոգիական փաստերի նկատմամբ և նրանց օբյեկտիվ նշանակությունը իբրև էվոլուցիոն ուսմունքի ոգին վկայող վավերագրեր։ Ընդհանուր ակնարկ պալեոնտոլոգիայի զարգացման XIX դ. առաջին կեսին։ Ձևերի փոփոխման գաղափարը ժամանակի մեջ (вовремени) և ժառանգականության ու պատմականության գաղափարը յերկրաբանության և պալեոնտոլոգիայի մեջ։ Սկրոպի և Լյայելի աշխատանքները։ Լյայելի «Յերկրաբանության հիմունքների» նշանակությունը։ Կենսաշխարհագրության հաջողությունները և համապատասխան փաստերի նշանակությունն էվոլուցիոն ուսմունքի հիմնավորման մեջ։ Համառոտ տվյալներ ցիտոլոգիայի (բջջաբանության) և հիստոլոգիայի (հյուսվածաբանության) զարգացման մասին։ Բջջային թեորիայի նշանակությունն էվոլուցիոն ուսմունքի հիմնավորման հարցում։

յ) Ընդհանուր բնութագիր ի ոգուտ էվոլուցիոն ուսմունքի դիտված պատճառաբանությունների, վորոնք հանդիսանում են վորպես միայն դարվինիզմի հողի վրա բացատրվող բիոլոգիական գիտությունների փաստեր։

գ) Դարվինիզմի հասարակական պատմական և սոցիալ տնտեսական նախադրյալները։ Կապիտալիզմի բարձրացող զարգացումը XIX դ. կեսերին։ Արդյունաբերության և խոշոր գյուղատնտեսության աճը։ Ընտանի կենդանիների և կուլտուրական բույսերի նոր ցեղերի առաջացման պրակտիկայի զարգացումը։ Մարդու կամքով ցեղեր ստեղծելու հնարավորության պատկերացումների զարգացումը։ Այդ պատկերացումների մատերիալիստական բնույթը։ Անգլիական կապիտալիստական հասարակության դասակարգային հակասությունների սրումը։ Այդ գործոնի նշանակությունը բուրժուական փիլիսոփայական ուսմունքների ձևակերպման մեջ։ Մալթուսի «ուսմունքը» գերբնակչության մասին և Ադամ Սմիթի տնտեսական թեորիան պայքարող ուժերի աղատ մրցման մասին։ Մարդու վորպես «բնական» եղոյիստի (յեսասերի) մեկնաբանումը։ Առևտրի, արդյունաբերության, տոհմային կենդանաբուծության և կուլտուրական բուսաբուծության աճումը կապիտալիստական հասարակության աճող դասակարգային հակասությունների ֆոնի վրա, վորպես դարվինիզմի նախադրյալներ և բազա։ Ֆ. Ենգելսը դարվինիզմի սոցիալական ծագման մասին։

ԹԵՄԱ. 3. Զ. Դարվինի եվոլուցիոն թեորիան

1. ՈՒՍՄՈՒՆՔ ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

a) Ընդհանուր ներածությունը Զ. Դարվինի ուսմունքի նկարագրության մեջ։ Դարվինի «Տեսակների ծագումը բնական ընտրությամբ կամ ընտրյալների պահպանումը գոյության կռվում» աշխատության բովանդակության նկարագրությունը։

Տեսակների ծագման վերաբերյալ «հայացքների պատմական ակնարկ» Դարվինի գրքում և այդ ակնարկի՝ վորպես դասընթացի վավերագրի՝ նշանակությունը։ «Ներածությունը» վորպես վավերագիր, վոր հաստատում է, թե Դարվինը գիտակցաբար յելնում եր կենդանաբուծության և բուսաբուծության պրակտիկայից։ «Տեսակների ծագման» գլուխների նկարագրությունը։

բ) Փոփոխականությունն ընտելացրած վիճակում և արհեստական ընտրություն.—Մարդու կողմից իր շահերին հարմարեցրած կենդանիների և բույսերի արհեստական ցեղերի զանազանակերպությունը և կատարելությունը։ Կենդանիների և բույսերի կուլտուրական ձևերի փոփոխականությունը։ Փոփոխականության պատճառները։ Արտաքին գործոնների դերը, խաչաձևման դերը։ Փոփոխականություն և ժառանգականություն։ Արհեստական ընտրություն։ Ընտանի կենդանիների մի քանի ցեղերի ծագումը։ Աղավնիների ցեղերի ծագումը։ Դիտակցական և անդիտակցական ընտրություն։ Հասկացողություն սելեկցիայի մասին։ Ընտանի կենդանիների և բույսերի ցեղերի բուծման մեթոդները, վորպես Դարվինի տեսական (построений) նախադրյալներ։

в) Փոփոխականությունը բնական պայմաններում.—Ներտեսակային փոփոխականություն և նրա հիմնական որինաչափություններն ըստ Դարվինի։ Ուսմունք տեսակի մասին։ Լայնորեն (широко) գաղթած և տարածված տեսակները, վորպես ամենից շատ փոփոխական ձևեր։ Տարբերակները (յենթատեսակներ) վորպես առաջացող (սկսվող) տեսակ։ Ընտանի ցեղերի և բնական տեսակների փոփոխականության հետազոտության զուգահեռ մեթոդը, վորպես Դարվինի կողմից պրակտիկայի, ինչպես իսկական կրիտերիումի, ոգտագործման հետևանք։

Փոփոխականության և ժառանգականության որենքները Դարվինի թեորիայում։ Պանգենեզիսի ժամանակավոր թեորիա։ Դարվինի թեորիայում փոփոխականության և ժառանգականության յերևույթների, վորպես եվոլուցիայի պրոբլեմի հետ սերտ կապված յերևույթների մեկնաբանումը։

ԹԵՄԱ. 4. Զ. Դարվինի եվոլուցիոն թեորիան

2. ԳՈՅՈՒԹՅԱՆ ԿՌԻՎ ՅԵՎ ԲՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Բաղմացում և գերբնակչություն, վորպես գոյության կռվի նախադրյալներ։ Գոյության կռվի որինակներ։ Ուղղակի պայքար, մրցում և պայքար միջավայրի պայմանների դեմ։ Բարդ հարաբերություններն որգանիզմների միջև և գոյության կռիվ։

Բնական ընտրությունն կամ ամենից լավ հարմարվածների պահպանում։ Բնական ընտրության բնու-

թագրում և նրա համեմատությունն արհեստական ընտրության հետ։ Ընտրության ներգործությունը։ Ձևերի մահացումը վորպես ընտրության հետևանք։ Մահացման պրոցեսի պատմական պայմանավորվածությունը։ Մահացման յերևույթի վերաբերյալ Լամարկի և Դարվինի հայացքների տարբերությունները, վորպես Լամարկի և Դարվինի եվոլուցիայի թեորիաների տարբերությունները բնորոշող մոմենտ։

Ընտրության սելեկցիոն-ստեղծագործող դերը։ Հատկանիշների խոտորման սկզբունքը և նրա խոր կապը ընտրության թեորիայի հետ։ Կառուցվածքի բարձրացման և ստորին ու բարձրակարգ ձևերի միաժամանակյա գոյությունը, վորպես փաստեր վորոնք բացատրվում են հատկանիշների խոտորման (դիվերգենցիա) սկզբունքի հիման վրա։ Սեռական ընտրության թեորիա։

Դիվերգենցիան, վորպես եվոլուցիոն պրոցեսի հիմնական հատկանիշ և Դարվինի թեորիայի ամենաբնորոշ սկզբունք։

Գեոլոգիայի, պալեոնտոլոգիայի, կենսաշխարհագրության, մորֆոլոգիայի և սիստեմատիկայի վկայությունները, վորոնք բերվում են Դարվինի կողմից վոչ միայն վորպես եվոլուցիայի ապացույցներ, այլև վորպես ցուցմունքներ (показания) ի օգուտ նրա թեորիայի։

ԹԵՄԱ. 5. Տեսակի պրոբլեմը դարվինիզմի լուսաբանությամբ։

Ընդհանուր պատկերացումներ տեսակի մասին։ Տեսակի մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական կրիտերիումը (չափանիշը)։ Տեսակի աշխարհագրական կրիտերիումը։ Տեսակ և արեալ։ Տեսակ, աշխարհագրական ռասա, ցեղ։ Ընդհանուր տվյալներ տեսակառաջացման պրոցեսի մասին։ Տեսակառաջացման դարվինյան սքեման։ Յենթատեսակ, վորպես սկսվող տեսակ։ Մի քանի սիստեմատիկների հայացքները տեսակառաջացման պրոցեսի վրա (Կլայնշմիդտ, Ռենշ և ուր.) և նրանց քննադատությունը։ Մուտացիաների դերը տեսակառաջացման պրոցեսում։ Տեսակների առաջացման պրոցեսի առթիվ դարվինյան պատկերացումների ճշտումը։ Որինակներ։

Տեսակի ռեալականության պրոբլեմը։ տեսակառաջացման

պրոցեսը վորպես սահուն պրոցեսի պատկերացման սիալ լինելը։ Տեսակի սահմանները։ Տեսակը վորպես բնության ռեալ յերևույթ։ Տեսակի ռեալականության պրոբլեմը և նրա եվոլուցիան։ Կ. Ա. Տիմիրյազևը տեսակի ռեալականության մասին։ Արարչագործության թեորիայի տեսակետից տեսակի ռեալականության հասկացողության խոր տարբերությունը դարվինյան հասկացողությունից. Հասկացողություն «Լիննեոնի» և «Ժորդանոնի» մասին։ Վերջին հասկացողության հակապատմական սուբյեկտիվիստական թեորիաներում և գենետիկայում։ Տեսակի պոպուլյացիա։

Տեսակի բնորոշումը։ Տարբեր հեղինակների (Դարվին, Տիմիրյազևի, Կոմարով) աշխատանքներում տված տեսակի բնորոշումների տեսություն։

1049
38

ԹԵՄԱ. 6. Որգանական նպատակահարմարության պրոբլեմը դարվինիզմի լուսաբանությամբ։

Որգանիզմների աղապտիվ կառուցվածքը, վորպես բնության անժխտելի յերևույթ։ Հարմարանքների ընհանուր սիստեմատիկ տեսություն։ Հարմարումները բիոտիկ և աբիոտիկ պայմաններին։ Միմիկրիա։ Դիշատչություն։ Պարազիտիզմ։ Հիդրոբիոնտների հարմարումները։ Քարայրային որգանիզմներ։ Փորող ձևեր։ Պալեոբիոլոգիա և գոյության պայմանների վերակառուցումը մորֆոլոգիական տվյալների հիման վրա։

Որգանական նպատակահարմարության յերևույթի անալիզ։ Հակադարվինիստների իդեալիստական պատկերացումներն ադապտացիայի մասին։ Հարմարված կազմվածքի (адаптированной организации) հասկացողությունը վորպես որգանիզմի և միջավայրի հարաբերությունների յերևույթ դարվինի թեորիայում։ Թեոլոգիային և թելեոլոգիային Դարվինի տված Հարվածը վորպես խոշոր ծառայություն։ Նպատակահարմար կառուցվածքի հարաբերական լինելը ցույց տվող փաստերի տեսություն։ Դարվինի համապատասխան տվյալների նկարագրությունը։ Հարմարվողականության հարաբերական լինելու հետագա որինակները։ Դիստելեոլոգիայի պրոբլեմը (Հեկել)։ Այլանդակություններ։ Ընտանի ձևերի պոսենցիալ-դիստելեոլոգիա-

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ... ԳՐԱԴԱՐԱՆ

կան կազմվածքը, վորպես պատճառ բնական պայմաններում նրանց ապրելու անընդունակության։ Դիստելեոլոգիական հատկանիշներ ձկների, թռչունների, կաթնասունների կուլտուրական ցեղերի մոտ, վորպես նրանց բնական ընտրության ներգործությունից մեկուսացնելու հետևանք։

Նպատակահարմարության հարաբերական լինելու եքսպերիմենտալ ապացույցներ։ Այդ տեսակետից Դելլերի, Բելյաևի, Զյուֆերտի, Սյուլիներտոնի և ուր. հեղինակների փորձերի նշանակությունը։ Ընդհանուր մեթոդոլոգիական յեզրակացություն և նպատակահարմարություն։ Դարվինյան հասկացողությունն անվանարկելու փորձերի քննադատություն։ Ֆ. Ենգելսը և նպատակահարմարության պրոբլեմը։ Այդ հարցում Դարվինի թեորիայի խոշոր առավելություններն յուրաքանչյուր այլ թեորիայի առաջ։ Եվոլուցիոն պրոցեսը վորպես հարմարվողական պրոցես և այդ փաստի նշանակությունը, վորպես վկայություն ի ոգուտ Դարվինի եվոլուցիոն ուսմունքի։

ԹԵՄԱ 7. Դարվինիզմի գնահատականը մարքսիզմ-լենինիզմի դիրքերից։

Դարվինի թեորիայի գնահատականը Մարքսի, Ենգելսի, Լենինի աշխատանքներում, վորպես մատերիալիստական թեորիայի, վոր հիմնված է պատմական մեթոդի կիրառման վրա և տարբերություն հենվում է դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդոլոգիայի վրա և վորպես թեորիայի, վոր ջախջախում է թեոլոգիայի, մետաֆիզիկայի և իդեալիզմի դիրքերը բիոլոգիայի բնագավառում։

Դարվինի ուսմունքի-տրամաբանական և փաստական տեսակետից հիմնավորված լինելը, վոր ջախջախեց հակաեվոլուցիոնիզմը բիոլոգիայի բոլոր բնագավառներում։ Տեսակի և նրա եվոլուցիայի հասկացողության տարբերային-դիալեկտիկական մեկնաբանումը (հակառակ Դարվինի նրա այն խոսքերի, թե բնությունը թռիչքներ չի անում)։ Ընդհատության և անընդհատության միասնությունը Դարվինի թեորիայում։ Պատահականության պրոբլեմը Դարվինի թեորիայում։

Պրակտիկան, վորպես ճշմարտության կրիտերիում Դարվինի թեորիայում։ Այդ փաստի նշանակությունը սոցիալիստական տնտեսության պայմաններում Միչուրինի և Լիսենկոյի աշխատանքների որինակների վրա։

Դարվինի թեորիայի բացասական կողմերի Մարքսի և Ենգելսի գնահատականը։ Դարվինի թեորիայի բուրժուական սահմանափակությունը։ Գոյության կռվի միակողմանի մեկնաբանությունը։ Ենգելսը գոյության կռվի և նրա դեպի գերբնակչության առնչության մասին։

Դարվինի կողմից գոյության կռվի բիոլոգիական որենքների վոչ քննադատական և անորինաչափ փոխանցումը սոցիալական յերևույթների սֆերան։ Դարվինի հակակրոնականության բնույթը կապված նրա քաղաքական հայացքների բուրժուական սահմանափակության հարցի հետ։

ԹԵՄԱ 8. Դարվինիզմի ազդեցությունը բիոլոգիական գիտությունների զարգացման վրա։

Սիստեմատիկայի զարգացումը և ֆիլոգենետիկ սիստեմատիկայի պրոբլեմը։ Եվոլուցիոն «տոհմածառը»։ Ե. Հեկկելի դերը ֆիլոգենետիկայի զարգացման մեջ։ Համեմատական անատոմիայի զարգացումը։ Հոմոլոգ որգանների հասկացողության զարգացումը։ Գեգենբաուրի դպրոցի աշխատանքները։ Ա. Դորն և ֆունկցիայի փոփոխման սկզբունքը։ Ոգտակար, վնասակար և ինդիֆերենտ (անտարբեր) որգանների հասկացողության զարգացումը, վորպես որգանիզմի և միջավայրի հարաբերությունների յերևույթ։ Ուսմունք ռուդիմենտների մասին։ Անտրոպոգենեզի պրոբլեմի մշակումը Հեկկելի կողմից։ Հեկկելի բանակցությունը հակադարվինիստների հետ։ Ֆ. Ենգելսի «Անտի-Դյուրինգ»-ը և այդ աշխատության նշանակությունը։

Սաղմաբանության զարգացումը։ Ֆ. Մյուլլերի և Ե. Հեկկելի բիոգենետիկ որենքը։ Ա. Ո. Կովալևսկու աշխատանքները նշտարիկի և ասցիդիայի մասին։ Այդ աշխատանքների նշանակությունը համապատասխան խմբերի ֆիլոգենետիկ հարաբերությունների ուսումնասիրության մեջ։ Բիոգենետիկ որենքի նշանակությունը ֆիլոգենիայի հետազոտության մեջ։

Պալեոնտոլոգիայի զարգացումը։ Նեյմայրի պա-

լեոնտոլոգիական աշխատանքները։ Նեյմայրի՝ «Կենդանական աշխարհի արմատները», վորպես պալեոնտոլոգիայի պրոբլեմների դարվինիստական հասկացողության որինակ։ Վ. Ո. Կովալևսկու—վորպես պալեոնտոլոգ-դարվինիստի աշխատանքները։ Եվոլուցիոն պրոցեսի հետազոտության յեռակի մեթոդն ըստ Հեկկելի։

Կենսաշխարհագրության զարգացումը։ Եկսպերիմենտալ բիոլոգիական գիտությունների զարգացումը Դարվինի գաղափարների ազդեցության տակ։ Դարվինյան ուղղությունը եկոլոգիայի զարգացման մեջ։

Բիոլոգիական գիտությունների զարգացման վրա դարվինիզմի ազդեցության ընդհանուր բնութագիրը, վորպես Դարվինի գաղափարի արդյունավետության վկայություն։

ԴԱՐՎԻՆԻԶՄԻ ԱՐԴԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՄԱ. 9. Փոփոխականության ուսմունքի արդի դրությունը։

а) Փոփոխականության Կ. Ա. Տիմիրյազևի դարվինիստական բնորոշումը։ Այդ հասկացողության բնորոշման հարցի սկզբունքային մեթոդոլոգիական նշանակությունը։ Պատմական մեթոդի (Կ. Ա. Տիմիրյազև) նշանակությունը փոփոխականության հասկացողության բնորոշման մեջ։ Փոփոխականության դարվինյան հասկացողությունը, վորն անքակտելի կապի մեջ է եվոլուցիոն ուսմունքի հետ։

б) Փոփոխականության հիմնական ձևերը։ Մոդիֆիկացիա, տեսական ռեյատիվ փոփոխականություն և նրա առնչությունը տեսակառաջացման պրոցեսի հետ։ Փոփոխականության տարբեր ձևերի դերը եվոլուցիոն պրոցեսում։

в) Փոփոխականությունը և միջավայրը։ Միջավայրի պայմաններ և գոյության պայմաններ։ Ռեակցիաների նորման և «պահանջների» նորման։ Գենոտիպ և ֆենոտիպ։ Որգանիզմի յուրահատկությունից կախված միջավայրի գործոնների ազդեցության յուրահատկությունը։ Որինակներ։ Միջավայրի գործոններն ներգործում են որգանիզմի ներսում այլ վորակով, քան նրանից դուրս։ Որգանիզմի և համապատասխան գործոնների միջև յեղած փոխազդեցությունների ըմբռնումը նրանց փոխներթափանցմամբ։ Որինակներ։

Որգանիզմի զարգացման ստադիայից կախված գործոնների ազդեցության յուրահատկությունը։ Ակադեմ. Տ. Դ. Լիսենկոյի թեորիան բույսերի զարգացման ստադիականության մասին։ Յարովիզացիայի ստադիա։ Տվյալ ստադիայում անհրաժեշտ գործոնների յուրահատուկ ընտրելիությունը (выборочность)։ Գործոնների յուրահատուկ ընտրելիությունը լուսային ստադիայում։

ԹԵՄԱ. 10. Ժառանգականության ուսմունքի արդի դրությունը

Ժառանգականության ուսմունքի զարգացման համառոտ բնութագիր։ Մենդելիզմի բնութագիրը։ Ժառանգականության քրոմոզոմային թեորիայի հիմքերը։ Մորգանիզմի բնութագրումը։ Ուսմունք մուտացիաների մասին։ Մենդելիզմի և մորգանիզմի դրական կողմերը։ Այդ ուսմունքների նշանակությունը ժառանգականության զարգացման համապատասխան ետապում, վորպես ուսմունքների, վորոնք նպաստեցին ժառանգական յերևույթների մատերիալիստական հասկացողության հաստատմանը։

Մենդելիզմի և մորգանիզմի ընդհանուր և նախնական քննադատությունը դարվինիզմի դիրքերից։

Պլազմատիկ ժառանգականության թեորիան։

Ժառանգական փոփոխականության գենոտիպի և գոյության պայմանների ընտրության միջոցով զեկավարելու պրոբլեմը։ Տ. Դ. Լիսենկոյի հայացքներն որգանիզմի ժառանգական հիմքի փոփոխության վերաբերյալ։ Ժառանգականության որենքները և միջավայրը։ Հարաբերական դոմինանտության պրոբլեմը։ Միչուրինի ուսմունքն այդ հարցի վերաբերյալ։ Դոմինանտության հարաբերականության նկատմամբ Միչուրինի հայացքների տեսական և պրակտիկ արդյունավետությունը։ Զիգոտայի վորպես փոփոխվող սիստեմի հասկացողությունն ըստ Միչուրինի։ Գենոտիպը, վորպես որգանիզմի ընդհանուր փոփոխական ժառանգական հիմք։

Ժառանգականության յերևույթներ ըստ Կ. Ա. Տիմիրյազևի հայացքների։ Կ. Ա. Տիմիրյազևի պայքարը ֆորմալ գենետիկայի դեմ և ազատ անբաբեխղճությունն այն հատատման, թե իբր Կ.Ա. Տիմիրյազևը չհասկացավ «մենդելականներին»։

ԹԵՄԱ. 11. Արհեստական ընտրության յեվ սելեկցիայի թեորիայի արդի դրությունը։

Սելեկցիայի հիմնական ձևերը։ Մասսայական և անհատական ընտրություն։ Սելեկցիոն միջոցառումների հաջողությունները։ Որինակներ։

Դարվինի աշխատանքների նշանակությունը ստեղծագործական սելեկցիայում, վորը վոչ միայն ոգտագործում, այլև ուղղություն ետ տալիս ձևերի փոփոխականության։ Միչուրինը և Լիսենկոն վորպես սելեկցիոնիստներ-դարվինիստներ։ Միչուրինի աշխատանքների բնութագիրը։ Դարվինի հայացքները հեռավոր խաչաձևման վրա. Ձևերի աշխարհագրական և տաքսոնոմիական հեռավորության նշանակությունն ըստ Միչուրինի ուսմունքի։ Միչուրինի կողմից միջավայրի նշանակության խոր հասկացողությունը, վոր դրսևորվեց տեսական պատկերացումներով հեռավոր հիբրիդիզացիայի մասին և գենոտիպի, վորպես դինամիկ սիստեմի հասկացողության մեջ։ Միչուրինի նվաճումների ընդհանուր ակնարկ։ Պղտատու և հատապտղային բույսերի Միչուրինյան սորտերը։ Դարվինի իսկական գիտակցական ընտրությունն Միչուրինի աշխատանքներում։ Զարգացման ղեկավարելը։ Բույսերի բնության վերափոխումը (Լիսենկո)։Մենդելի որենքների իսկական գիտական մեկնաբանությունը Միչուրինի կողմից։
Տ. Դ. Լիսենկոյի սելեկցիոն աշխատանքները և կոլտնտեսային հողագործության նշանակությունը սելեկցիայի զարգացման մեջ։

ԹԵՄԱ. 12. Գոյության կռվի յեվ բնական ընտրության թեորիայի արդի դրությունը

Գոյության կռիվ։ Այդ յերևույթի ուսումնասիրությունը։ Գոյության կռվի ձևերի կլասիֆիկացիան։ Գոյության կռվի որինակները և նրանց անալիզը։ Գոյության կռվի և բնական ընտրության եքսպերիմենտալ ուսումնասիրություն։ Հարմարվողականության հարաբերական լինելը նոր տվյալներում։ Ադապտացիայի պրոբլեմի և մասնավորապես—հովանավորող գույնի և միմիկրիայի պրոբլեմի արդի դրությունը։ Զեհնոլայի, Պաուլսենի, Գելլերի, Զյուֆերտի, Սյուիններտոնի և ուր. հեղինակների աշխատանքները։ Գոյության կռվի և բնական ընտրության ուսումնասիրության մատեմատիկական մեթոդը (Խոլդենի, Ֆիշերի, Դաուդեյի և ուր. հեղինակների աշխատանքները)։

Բիոցենոլոգիայի նշանակությունը ընտրության պրոցեսների ուսումնասիրության մեջ։ Հասկացողություն բիոցենոզի և սուկցեսիայի մասին։ Բիոցենոզի դինամիկան։ Որինակներ։ Դարվինի՝ վորպես արդի բիոցենոլոգիայի հիմնադրի նշանակությունը։

ԹԵՄԱ. 13. Եվոլուցիայի ընթացքը յեվ եվոլուցիոն պրոցեսի ղեկավարման պրոբլեմը։

Դիվերգենցիա, կոնվերգենցիա և պարալելիզմ ու այդ սկզբունքների առընչությունը բնական ընտրության թեորիայի հետ։ Մոնոֆիլիա և պոլիֆիլիա և այդ սկզբունքների առընչությունն ընտրության թեորիայի հետ։ Մոնոֆիլիա և դիվերգենցիա վորպես եվոլուցիոն պրոցեսի դարվինյան հասկացողության հիմքում ընկած սկզբունքներ։ Եվոլուցիոն պրոցեսի հարմարվողական բնույթը։ «Ռադիացիայի» յերևույթը։ «Որատսելեկցիա», վորպես դիվերգենցիայի հետևանք։ Ձևերի ադապտիվ, ստատիճանական և ֆիլոգենետիկ շարքերը։

Ակադեմ. Ա. Ն. Սեվերցովի ուսմունքն արոմորֆոզների և իդիոադապտացիաների մասին և դարվինյան դիվերգենտ եվոլուցիայի պրոբլեմը։

Ստորին և բարձրակարգ խմբերի սինխրոն (միաժամանակյա) գոյության յերևույթը և դիվերգենտ եվոլուցիայի պրոբլեմը։

Եվոլուցիոն պրոցեսի անդարձելիության պրոբլեմը։ Վ. Ի. Լենինը զարգացման եյության մասին։ Վ. Ի. Լենինի՝ «դիալեկտիկայի հարցի մասին» աշխատության նշանակությունը։ Իդեալիստական պատկերացումը «ինվոլուցիայի» մասին։ Պրոբլեմի քննադատությունը։

Եվոլուցիոն պրոցեսի մորֆոլոգիական որինաչափությունը։

ները։ Բազմաֆունկցիոնալության պրոբլեմը և ֆունկցիաների փոփոխման սկզբունքը (Ա. Դարն)։ Սուբստիտուցիա։ Կոմբինացիա։ Հասկացողություն պրոտալաքսիսի և դեյտալաքսիսի մասին։

Ա. Ն. Սեվերցովի ուսմունքը կոմբինացիայի մասին։

Ակադեմ. Ա. Ն. Սեվերցովի ֆիլեմբրիոգենեզի թեորիան։ Այդ թեորիայի հիմքերը։ Ֆիլեմբրիոգենետիկ փոփոխությունների ձևերը։ Հեկկելի բիոգենետիկ օրենքի քննադատությունը։ Ա. Ն. Սեվերցովի՝ ֆիլո—և օնտոգենեզի ըմբռնումը նրանց փոխներթափանցմամբ և փոխադարձ պայմանավորվածությամբ։ Եվոլուցիոն մորֆոլոգիա։ Ա. Ն. Սեվերցովի աշխատանքների նշանակությունը եվոլուցիոն պրոցեսի ուղղությունների մասին դարվինիստական պատկերացումների հիմնավորման գործում։

Կենդանական խմբերի ֆիլոգենետիկ հարաբերությունների ընդհանուր տեսություն, վորպես դիվերգենտ եվոլուցիայի դարվինյան սքեմայի ցուցադրում։

Ա. Ն. Սեվերցովի ֆիլեմբրիոգենեզի թեորիան, Տ. Դ. Լիսենկոյի ստադիականության թեորիան և եվոլուցիոն պրոցեսների զեկավարման պրոբլեմը դարվինիզմի և Ի. Վ. Միչուրինի և Տ. Դ. Լիսենկոյի աշխատանքների լույսի տակ։

ԹԵՄԱ 14. Կ. Ա. Տիմիրյազեվ, Ի. Վ. Միչուրին, Տ. Դ. Լիսենկո—խորհրդային դարվինիստներ։

Կ. Ա. Տիմիրյազեվը—գիտնական-հեղափոխական, Դարվինի թեորիայի անվեհեր պաշտպան և պրոպագանդիստը Ռուսաստանում։ Կ. Ա. Տիմիրյազեվի աշխատանքները դարվինիզմի մասին և նրանց խոշոր մեթոդոլոգիական և պրոպագանդիստական նշանակությունը։ Դարվինիզմի հարցերի մասին Կ. Ա. Տիմիրյազեվի աշխատանքների բնութագրումը։ Կ. Ա. Տիմիրյազեվի պայքարը ռուս հակադարվինիստների դեմ (Դանիլևսկի, Սբրաիով)։ Կ. Ա. Տիմիրյազեվի կենսագրությունը։ Դարվինիզմի վերաբերյալ Կ. Ա. Տիմիրյազեվի հիմնական աշխատանքների հատուկ տեսություն («Չարլզ Դարվին և նրա ուսմունքը», «Պատմական մեթոդը բիոլոգիայում» և ուր.)։

Ի. Վ. Միչուրին։ Կյանքն ու ստեղծագործությունը։ Նրա աշխատանքների, գաղափարների և գործունեության ընդհանուր բնութագիրը։ Ի. Վ. Միչուրինի աշխատանքների ծավալումը խորհրդային իշխանության տարիներին։ Միչուրին և միչուրինականները։

Տ. Դ. Լիսենկո։ Կյանքն ու գիտական գործունեությունը։ Տ. Դ. Լիսենկոյի գիտական աշխատանքի խոր կապը կոլտնտեսային հողագործության և կոլտնտեսային սելեկցիոն աշխատանքի հետ։ «Յարովիզացիա» ժուռնալը—դարվինիզմի մարտական որգանը։

ԲԱԺԻՆ III. ՊԱՅՔԱՐ ՀԱԿԱԴԱՐՎԻՆԻԶՄԻ ԴԵՄ

ԹԵՄԱ. 1. Սոցիալ-դարվինիզմ

Հանուն դարվինիզմի պայքարի ծագումն ու զարգացումը։ Վիրխովի, Ագասիզի, Կյոլիկերի, Վիգանդի և ուր. վերաբերմունքը Դարվինի ուսմունքին։ Թելեոլոգների և թեոլոգների պայքարը դարվինիզմի դեմ, վորպես թեորիայի, վոր ծանր հարվածում է թելեոլոգիային և թեոլոգիային։

Բուրժուական դարվինիզմ։ Թոմաս Հեքսլի։ Երնստ Հեկկել և Ֆրանց Մյուլլեր։ Հանուն դարվինիզմի Հեքսլիի պայքարը Անգլիայում, Հեկկելի՝ Գերմանիայում։ Ռոկար Շմիդտը, Գեորգ Զեյդլից և ուր. 19-րդ դ. գերմանացի դարվինիստներ։ Բնական ընտրության օրենքները մարդկային հասարակության նկատմամբ գիտակցորեն փոխանցող բուրժուական դարվինիզմի առանձնահատկությունները։

Բուրժուական դարվինիզմի անխուսափելի և օրինաչափ զարգացումը (վերածումը) սոցիալ-դարվինիզմի։ Վերջնիս բնութագիրը, վորպես հոսանքի, վոր արտացոլում է կապիտալիստական հասարակության դասակարգային հակասությունները։ Սոցիալ-դարվինիզմը, վորպես կապիտալիստական հասարակության շահերի համար Դարվինի ուսմունքն ոգտագործելու փորձերի արտահայտություն։

Սոցիալական դարվինիզմի անալիզն անտրոպոգենեզի պրոբլեմի օրինակի վրա։ Հարցի պատմությունը։ Մարդու տեղը Լիննեյի՝ «Բնության սիստեմ»-ում։ Լիննեյի հայացքներն անտրոպոգենեզի նկատմամբ։ Լամարկը և մարդու ծագումը։ Դարվինի հայացքներն անտրոպոգենեզի պրոբլեմի նկատմամբ։ Դարվինի նշանակությունն այդ պրոբլեմի

զարգացման մեջ։ Հեքսլիի և Հեկկելի աշխատանքները։ Դարվինի «Սեռական ընտրություն և մարդու ծագումը»։ Կ. Ա. Տիմիրյազեվի աշխատանքները։

Մարդը և նրա տեղը պրիմատների սիստեմում։ Պրիմատների սիստեմատիկական տեսություն և մարդու տեղը սիստեմում։ Պալեոնտոլոգիա, պրիմատների անցյալ և արդի տարածումը։ Պրիմատների էվոլուցիան և արդի անտրոպոմորֆ կապիկների ծագումը։ Մարդու առնչություններն և արդի մարդանման կապիկների ֆիլոգենետիկ հարաբերությունները։

Անտրոպոգենեզ։ Այդ հարցի մեթոդոլոգիան։ Մարդու ծագման հարցի վերաբերյալ Իբեն Դարվինի տեսական պատկերացումների բուրժուական սահմանափակությունը։

Ենգելսի աշխատանքային թեորիան («Աշխատանքի դերը կապկի մարդացման պրոցեսում») և նրա խոշոր, ղեկավար նշանակությունն անտրոպոգենեզի պրոբլեմի ուսումնասիրության մեջ։ Մարդու էվոլուցիայի բնորոշ առանձնահատկությունները և մարդու լինելության և զարգացման պրոցեսի վորակային տարբերությունները կենդանիների էվոլուցիայից։ Մարդու զարգացման ստադիաները. պիտեկանթրոպ, սինանթրոպ, հայդելբերգյան մարդ, նեանդերթալացի, կրոմանյոնի մարդ։ Մարդու արդյունագործությունը (ինդուստրիա) և նրա զարգացումը քարե դարի ընթացքում։

Հին պալեոլիտի հասարակական ձևերի ընդհանուր բնութագիր ըստ քարե դարի համապատասխան վավերագրերի։

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՐՎԻՆԻԶՄ ՅԵՎ ՌԱՍԻԶՄ

Սոցիալ-դարվինիզմը, վորպես Գոբինոյի, Լյապուժի և ուր. ռեակցիոն ռասիստական թեորիաների հիմք. Ռասաների անհավասարությունը ռասիստական «թեորիաներում» և այդ «թեորիաների» դասակարգային էությունը։

Ռասիզմը արդի բուրժուական յերկրներում, մանավանդ ֆաշիստական։ Եվգենիկան, վորպես ռասաների անհավասարության մասին ռեակցիոն և ֆաշիստացող «գիտությունների» տարբերակներից մեկը։ Եվգենիկայի գենետիկ հիմնավորում կազմելու և սելեկցիայի մեթոդներով մարդկանց ցեղեր բուծելու ձեռնարկումների մշակման բուրժուական գենետիկների փորձերը։

Շահագործման ամրացման, ճնշման, ճորտատիրության նկատմամբ բուրժուազիայի դասակարգային շահերը մերկացնող այդ հայացքների ռեակցիոն և հանցավոր բնույթը։

Քննադատություն ԽՍՀՄ-ի մի քանի եվգենիկների և գենետիկների (Ն. Կ. Կայլցով, Ա. Ս. Սերեբրովսկի և ուր.) աշխատանքների, վորոնց մեջ զարգացրած են բուրժուական ռասիստական թեորիաներ։

ԹԵՄԱ. 2. Մեխանոլամարկիզմ

Նեոլամարկիզմ և նրա ճյուղերը—պսիխոլամարկիզմ և մեխանոլամարկիզմ։

Պսիխոլամարկիզմ.—Կոպի ուսմունքը ֆիզիոգենեզի, կինեգենեզի և բատմոգենեզի մասին։ Հոգեկանի նշանակությունն էվոլուցիայի մեջ ըստ Կոպի, Պսիխոլամարկիստներ Ռեյնկե, Ֆերանսե, Պաուլի և ուր.։ Պսիխոլամարկիզմի ռեակցիոն էությունը։

Նեգելիի մեխանոֆիզիոլոգիական թեորիան.—Նեգելիի թեորիայի մեխանիցիզմը և իդեալիզմը։ Եյմերի որտոգենեզը։ Որտոգենեզի, վորպես էվոլուցիոն պրոցեսի ղեկավար (ведущем) հատկանիշի պատկերացումների չհիմնավորված լինելը։ Մեխանիցիզմն Եյմերի թեորիայում.

Մեխանոլամարկիզմ.—Մեխանոլամարկիզմի թեորիայի բացատրությունը։ Ստացական հատկանիշների ժառանգականության պրոբլեմը։ Հասկացողություն սոմատիկ և զուգահեռ ինդուկցիայի և բլաստոգեն վարիացիաների մասին։ Պրոբլեմի փաստացի դրությունը։ Այդ պրոբլեմի գնահատականը մեխանոլամարկիզմի թեորիայում, վորպես էվոլուցիոն ուսմունքի իբրև թե առաջատար պրոբլեմ։ Այդ պրոբլեմի՝ իբրև յերկրորդական նշանակություն ունեցող պրոբլեմ, իսկական նշանակությունը, այնչափով, ինչ չափով փոփոխությունների արդյունքները և ձևը վորոշվում են վոչ թե իր իսկ փոփոխականությամբ այլ ընտրությամբ։ (Կ. Ա. Տիմիրյազեվ)։

Ադապտացիայի պրոբլեմը և ադեկվատ փոփոխականությունը մեխանոլամարկիզմի թեորիայում.—Ադապտացիայի յերևույթը բացատրելու մեխանոլամարկիզմի անընդունակությունը։ Ադապտացիայի յերևույթի պրո-

րոբլեմը «հանելու» և նրան ադեկվատ փոփոխականության պրոբլեմի վերածելու փորձերի չհիմնավորված լինելը։ Աղապտացիայի պրոբլեմի վերաբերյալ մեխանոլամարկիստների հայացքների անալիզը, որպես մեթոդ, որում յերևան և հանվում մատերիալիստական ֆրազոլոգիայում քողարկված մեխանոլամարկիզմի իդեալիզմը։ Մեխանոլամարկիստների կողմից, իմմանենտ նպատակահարմարության գաղափարի ճանաչումը որպես մեխանոլամարկիստական տեսակետի անհրաժեշտ հետևանք։ Միջավայրի ազդեցության մեխանոլամարկիստների մեխանիստական հասկացողությունը։ Մեխանոլամարկիզմի իդեալիզմն ու մեխանիցիզմը։

ԹԵՄԱ 3. Ավտոգենեզ

Ավտոգենետիկների հիմնական դրույթները։ Հարտմանի, Վիգանդի և ուր. հեղինակների ավտոգենետիկ կոնցեպցիաները և նրանց հակամատերիալիստական հայացքները։

Վայսմանիզմ.—Ա. Վայսման և նրա հայացքները Դարվինի թեորիայի մասին։ Սաղմնապլազմայի թեորիան և սաղմնային պլազմայի անընդհատության սկզբունքը։ Սաղմային ճանապարհ։ Սոմա և սեռական բջիջներ։ Սաղմային ընտրություն։ Ամֆիմիկսիս և պանմիկսիս.

Վայսմանի հայացքների քննադատությունը։ Վայսմանի նշանակությունը մեխանոլամարկիզմի դեմ յեղած պայքարում։ Վայսմանի հայացքները ստացական հատկանիշների ժառանգման պրոբլեմի մասին։ Հասկացողություն սաղմային ընտրության մասին Վայսմանի թեորիայում և ընտրության սկզբունքի վերածումն որգանիզմի «ներսում» ավտոնոմ ներգործող ընտրության ավտոգենետիկ սկզբունքի։ Վայսմանի մեխանիստական պատկերացումները սոմայի և սեռական բջիջների հարաբերությունների մասին։ Սեռական բջիջների ինքնուրույնությունն ըստ Վայսմանի։ Վայսմանիզմ և մենշևիկող իդեալիզմ։

Դե-Ֆրիզի մուտացիոն թեորիան.—Մուտացիայի յերևույթը։ Այդ յերևույթի մեկնաբանումը Դե-Ֆրիզի մուտացիոն թեորիայում։ Դե-Ֆրիզի պատկերացումները նախամուտացիոն շրջանի և պարբերական մուտացիաների մասին։ Եվոլուցիոն պրոցեսի վերածումը մուտացիոն պրոցեսի Դե-Ֆրիզի թեորիայում։ Նախամուտացիոն շրջանի մասին պատկերացումների ավտոգենետիկ ատոմը։ Արդի հակադարվինիստական ուսմունքների ընդհանուր բնութագիրը, նրանց ռեակցիոն եությունը, նրանց գնահատումը, որպես բուրժուազիայի դենքի կապիտալիզմի նեխման շրջանում։

Ավտոգենեզը Մ. Ա. Ֆիլիպչենկոյի Աշխատանքներում.—Ֆիլիպչենկոյի բանաձևը, կամ եկտոգենեզ, կամ, յեթե նա ապացուցված չե, ավտոգենեզ, որպես բանաձև, տիպիկ բուրժուական գիտության համար, որը անընդունակ է բարձրանալ միջավայրի և որգանիզմի փոխհարաբերությունների գիտական ըմբռնմանը։

Լ. Ս. Բերգի նոմոգենեզը, որպես ամենից շատ մըշակված ավտոգենեզի թեորիաներից մեկը։ Նպատակահարմարության, որպես կենդանի եյակների հիմնական հատկության Բերգի մեկնաբանումը։ Մատերիալիստական ֆրազոլոգիան և այդ մեկնաբանության իդեալիստական բնույթը։ Եվոլուցիոն պրոցեսի վորոշ ուղղություն ունենալը և նախորոշվածությունը ըստ Բերգի։ Ֆիլոգենիայի նախակատարման (предварения) «որենքը» և այդ հասկացողության վոչ գիտական լինելը։ Կոնվերգենցիայի սկզբունքի նշանակությունն ըստ Բերգի։ Պարալելիզմի և պոլիֆիլետիզմի, որպես եվոլուցիոն պրոցեսի հատկանիշների նշանակությունն ըստ Բերգի։ Բերգի պայքարը դարվինիզմի դեմ։ Ընտրության ստեղծագործող դերի բացասումը նրա կողմից։ Մոնոֆիլետիզմի և դիվերգենցիայի բացասումը, որպես եվոլուցիոն պրոցեսի դեկավար հատկանիշներ։ Պատահականության և որինաչափության մետաֆիզիկական հակադրումը Բերգի թեորիայում։ Բերգի թեորիայի ֆորմալ տրամաբանական ներդաշնակությունը, և նրա նշանակությունը որպես փիլիսոփայական սխեմայի, որ թույլ է տալիս բաց անելու ավելի քիչ անկեղծ ավտոգենետիկ թեորիաներ։

Ն. Ի. Վավիլովի հոմոլոգ շարքերի թեորիան, որպես ավտոգենետիկ թեորիայի որինակ, քողարկված և մատերիալիստական ֆրազեոլոգիայով և «թեթև կցված» (приставегнутом), բայց որգանապես հոմոլոգ շարքերի թեորիայից չբղխող դիալեկտիկական մատերիալիզմի մասին վերացական դատողություններով։ Եվոլուցիոն պրոցեսի վերածումը Ն. Ի.

Վավիլովի թեորիայում հոմոլոգ շարքերի բացվելու ավտոգենետիկ պրոցեսի։ Ընտրության, որպես լոկ ելիմինացող (элиминирующего) և ոչ ստեղծագործող պրոցեսի նրա հասկացողությունը։ Եվոլուցիայի ստատիկ հասկացողությունը Ն. Ի. Վավիլովի մոտ։ Ն. Ի. Վավիլովի հակադարվինիստական թեորիաները։ Ն. Ի. Վավիլովի թեորիան և նրա քննադատությունը Տ. Լիսենկոյի կողմից։

Լամարկիստական և ավտոգենետիկ թեորիաների ընդհանուր քննադատություն.—Այդ թեորիաների միջև ճշգրիտ սահմաններ գտնելու անհնարինությունը։ Սկզբունքային աղգակցություն եկտոգենեզի և ավտոգենեզի մեթոդոլոգիայի միջև։ Եվոլուցիայի հիմնական պրոբլեմների անլուծելիությունն եկտո—ավտոգենեզի հողի վրա։ Ավտո և եկտոգենեզի պարտությունն ադապտացիայի յերևույթների հարցում և այդ պրոբլեմի նշանակությունը, որպես զենքի ավտո և եկտոգենեզի մեխանոլամարկիզմի և հակադարվինիզմի բոլոր տեսակների դեմ։ Եվոլուցիայի շարժիչ ուժերի պրոբլեմի անլուծելիությունն եկտո և ավտոգենեզի հողի վրա, որգանիզմի և միջավայրի, «ներքինի» և «արտաքինի» հարաբերությունների սխալ մեկնաբանության կապակցությամբ։

Դարվինի ուսմունքը, որպես միակ եվոլուցիոն ուսմունք, որ թույլ է տալիս գտնելու եվոլուցիայի պրոբլեմների ճիշտ լուծումը։

ԹԵՄԱ. 4. Բուրժուական գենետիկա

Ֆորմալիզմն արդի բուրժուական գենետիկայում և նրա խզվածությունն եվոլուցիոն ուսմունքից։ Ընդունելով խոսքով գենի փոփոխականությունը, բուրժուական գենետիկան գործով և պրակտիկայում ամբողջովին կառուցվում է գենի անփոփոխականության սկզբունքի վրա։ Այդ հարաբերությունների հետ կապված գենների անփոփոխականության մասին դատողությունների վերացական լինելը։ Գենի անփոփոխականության սկզբունքը նույնքան մետաֆիզիկ է, ինչպես և տեսակի անփոփոխականությունը։ Դարվինիզմը և եվոլուցիան բացասող Լոտսիի և Բետսոնի թեորիաները, որպես արդի ֆորմալ գենետիկայի տրամաբանական «յեզրակացություն» և «պսակ»։

Փոփոխականության յերևույթի «գենետիկական» մեկնաբանության քննադատությունը.—Փոփոխականության ստատիկ, հակապատմական հասկացողության ելեմենտներն արդի գենետիկայում։ Բիոմետրիկայի կարևորությունը և նրանով տարվելու բացասական կողմերը (միջինի ֆետիշիզմը)։ Փոփոխականության յերևույթի հակապատմական հասկացողությունը։ Յոհանսենի մաքուր գծերը։ Հակադարվինիստական սպեկուլացիաներ կապված այդ հասկացողության հետ։ Մաքուր գծերի, որպես անփոփոխ ձևերի մետաֆիզիկ հասկացողությունը։

Եվոլուցիայի պրոբլեմն «ինքնուրույն» լուծելու գենետիկայի պրետենզիաները և խզվածությունը դարվինիզմից։ Արդի բուրժուական գենետիկայի հակադարվինիզմը։ Յա. Ա. Յակովլևի՝ «Դարվինիստների և մի քանի հակադարվինիստների մասին» հոդվածի քննությունը։

Դարվինի թեորիայի, որպես ընդհանուր աշխարհայացքային գիտության դրությունը կապիտալիստական յերկրներում։ Դարվինյան գաղափարների հետապնդումը։ Դարվինիզմի դասավանդման արգելումը։ Այդ փաստերի նշանակությունը որպես իմպերիալիզմի դասակարգային հակասությունների սրման ցուցանիշ։

Դարվինի թեորիայի դրությունը ԽՍՀՄ-ում։ Դարվինիզմի մաքրումը բուրժուական «վերնաշենքերից»։ Սոցիալիստական գենետիկայի նշանակությունը դարվինիզմի զարգացման մեջ։ Դիալեկտիկական մատերիալիզմը, որպես դարվինիզմի մեթոդոլոգիա։

Դարվինիզմի նշանակությունը սոցիալիստական անտեսության պայմաններում և բնության վերափոխման պրոբլեմը, որպես խորհրդային դարվինիզմի հիմնական պրոբլեմ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) Հիմնական.

1. Կ. Ա. Տիմիրյազև.—Չ. Դարվին և նրա թեորիան. նույն, ռուսերեն. изд. Сельхозгиз, пад ред. Комарова. 1937 г.

L4092

2. Ч. Дарвин.—Происхождение видов.

3. Ֆ. Ենգելս,— «Բնության դիալեկտիկա»։

(Գերադասելի է ռուսերեն վերջին հրատարակությունը։)

բ) Լրացուցիչ գրականություն։

1. Маркс, Энгельс, Ленин,— О биологии. Партиздат, последнее издание.

2. Ч. Дарвин,—изменение животных и растений в состоянии одомашнения.

3. К. А. Тимирязев.—Дарвинизм и селекция. Сельхозгиз 1937 г.

[redacted]

5. Лысенко Т. Д.—Переделка природы растений, Сельхозгиз, 1937 г.

6. Мичурин И. В, — Выведение новых, улучшенных сортов плодовых и ягодных растений, Сельхозгиз, 1933 г.

7. Мичурин И. В.—Итоги 60-ти летних работ.

8. Северцов А. Н.—Этюды по теории Эволюции. Гиз. 1922 г.

9. Северцов А. Н. Главные направления эволюционного процесса. Биомедгиз 1934. г.

10. Нестурх М. Ф.—Происхождение человека, (последнее издание).

11. Журнал „Яровизация".

12. Журнал „Реконструкциа сельского хозяства„

13. Журнал „Проблемы животноводства„.

Խմբագիրներ. Ս. Ա. ՆՈՎԻԿՈՎ
Ա. Ա. ՊԱՐԱՄՈՆՈՎ

Թարգմ. Ռ. ԳՆԳՐԻԵԼՅԱՆ

Սրբագրիչ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գլավլիտ լիպոր Կ.—8252. Պատվեր № 53 Տիրաժ 1000
հանձնված է արտադրության 27 սեպտ. 1937 թ.,
ստորագրված է տպագրելու 15 հոկտ. 1937 թ.,

Աուսուցչների Վերակազմման Ինստիտուտի տպարան,
Ցերևան, Մարքսի փողոց № 17

ՀՀ Ազգային գրադարան
NL0269467

505

13388

ԳԻՆԸ 60 Կ.